

ՄԱՅՐ ԵՈՒԹԱԿ ԶԵՆԱԳՐԱՅ ՍՐԲՈՑ ԵՎԱԿՈՒՅԱՆՑ:  
 Հատոր Գ: Կազմեց Նորայր Եպո. Պարպեամ:  
 Բառածալ, քարպակզմ, 696 էջ, ձկարգադր:  
 Երևուստէմ, 1969:

Ծնորհիւ Կիւլպէնկեան Հիմնարկութեան  
 Հայկական Մատենաշարին, կ'ունենանք նաեւ  
 Երուսաղէմի մեծ ձեռագրաց հաւաքման  
 չորրորդ հատորը՝ որով վանքին ցուցակա-  
 գրուած ձեռագրաց թիւը կը հասնի 1365ի,  
 այսինքն աւելի քան մէկ երրորդը հաւաք-  
 ման ձեռագիրներուն:

Ցուցակագիր Նորայր Սրբազան խղճմը-  
 տորէն կատարած է իր դործը, ինչպէս նաեւ  
 խորհ՝ նոյնպէս ալ իր այս ցուցակով: Այս  
 հատորին մէջ ցուցակագրուած 365 ձեռա-  
 գիրներուն կէսը փէ դարէն կամ անկէ առաջ  
 գրուած են: Մեծագոյն մասամբ փոքրվա-  
 ծուներ են եւ միայն երեք Աւետարան եւ եր-  
 կու Աստուածաշունչ կան:

Պարունակութեամբ շահեկան են բազմա-  
 թիւ ձեռագիրներ: Թիւ 1096 Ժողովածոն  
 1633էն ստացուած է Բարսեղ բարունակե-  
 ա՛ն, որ Ամթեցին է: Թիւ 1102ի մագաղաթի  
 վրայ մանրանկարները՝ կրնան եկամուտ ըլ-  
 լալ եւ ԺԸ դարէն աւելի առաջ: Թիւ 1128-ը  
 անտարակոյս 1411ին գրուած է Եկեղեցաց  
 դաւառ: Թիւ 1133ի եւ 1239ի «Գովասանք  
 Թոշնոց» տաղը պահասաւոր է եւ արդէն  
 ծանօթ ամբողջական հրատարակութեամբ  
 իմ կողմէս: Թիւ 1136ի գրիչ Նոր(ա)տունի  
 զպիր հաւանարար նոյնն է Նորատունի  
 Վրդ. Հոռմկլայեցիի հետ, որ 1653ին Սե-  
 բաստիա Ս. Հրեշտակապետ գրած է Մեկ-  
 նութիւն Մատթէի: Թիւ 1187ի գրիչը յայտ-  
 նապէս Տաւնական քահանան է, որուն գըր-  
 չէն է նաեւ թիւ 1262-ը՝ 1378էն, ինչպէս  
 նաեւ Պերլինի թիւ 25ը՝ 1361էն: Որոշ է նաեւ  
 որ 1187 թիւ ձեռագրին Պողոստիան Սըր-  
 բազանի տուած 1415 Քրիստոսի թուականը  
 ճիշդ չէ եւ պէտք է ԺԴ դարու վերջին քա-  
 ուորդին մէջ նշանակել: Թիւ 1235ը Յովհան-  
 նէս Վրդ. Մրգուզի հեղինակութիւնն է: Մե-  
 ծարթէք նորութիւն է թիւ 1259-ը՝ Գիրք  
 Հագեաց եւ Հրեշտակաց, զոր թարգմանած

է Տրա Ղուան: Այս ձեռագիրը եւ յիշատա-  
 կարանը անծանօթ մնացած են Ամիրտովլաթ  
 բժիշկին կենսագրութեամբ զբաղողներուն:  
 Գրուած է 1481ին Աստուածատուր սարկա-  
 ւազէ, «ի ինդրոյ Ամիրտովլաթ բժշկին,  
 յիշատակ հոգւոյ իւրոյ, ի վայելումն զա-  
 ւակաց իւրոց»: Գրութեան վայրը հաւա-  
 նաբար Կ. Պոլիս, ուր կը գտնուէր Ամիր-  
 տովլաթ այդ ատեն: Զուգադիպութեամբ  
 մը, սոյն ձեռագրին բնօրինակն ալ կը գըտ-  
 նուի Երուսաղէմի հաւաքման մէջ, գրուած  
 1307ին՝ երբ թարգմանուած էր:

Ցուցակը կ'աւարտի զանազան ցանկերով,  
 որոնք շատ կը հեշտացնեն ուսումնասէրին  
 դործը այս հատորէն օգտուելու:

Ե. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅՍՅԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՅՈՒԹԻՒՆ: Կազմեց Ար-  
 մենակ Սայմաւելմ: Լաքակզմ, մեծ ուքա-  
 ծալ, էջ 472: Երևան, 1969:

Վերջապէս լոյս տեսաւ Արմենակ Սալ-  
 մասլեանի այս մեծարժէք գործը: Հատորին  
 վրայ ակնարկ մը իսկ պիտի բաւէ դիտողին  
 խորհիլ տալու այն հսկայական գործը եւ  
 անխնայանքը որ Մայմասլեանը կատարած է:  
 Կարծես կործին աննուանելի դժուարու-  
 թիւները ջրատէին, նախանձոր ու անպար-  
 կելշտ խոշընդոտներ ալ հանուեցան գործին  
 արտասահման հրատարակութեան համար:  
 Սակայն ուրախ եմ որ Սայմասլեանն, շնորհիւ  
 Երևանի հայագէտներուն, կըցաւ տեսնել  
 իր բազմաշարչար գործին հրատարակու-  
 թիւնը:

Գործը մասնաւորապէս կը պարունակէ  
 Փրանսերէն, գերմաներէն եւ անգլերէն գիր-  
 քեր՝ որոնք զոնէ մասամբ նիւթ կը պարու-  
 նակին Հայոց եւ Հայաստանի մասին, կը խօ-  
 սին Հայ մշակոյթի, կրօնքի, եւայլնի մա-  
 սին: Արդարեւ Արարատ Լարիպեանի «Քրմ-  
 բագրի Կողմից» յառաջարանին մէջ ըսածին  
 պէս, «Ձեռնյաժ Հայկական Մատենագիտու-  
 թիւն աշխատութիւնը ոչ բոլոր ղէպքերում  
 է համապատասխանում մեր մատենագիտու-  
 կան — պահանջներին... Եկատի ունենալով

1 Ապահովարար Խիզանի դպրոցի մամբակարմեր  
 են ծձ դարու վերջէն կամ փէ դարու սկիզբէն:

նրա ամփոփած հարուստ նիւթերը... հըրատարակում ենք համարե՛մ անփոփոխ»։ Արմենակ Սարմայեան 25 երկար տարիներ նուիրած է իր այս աշխատութեան, եւ անկարելի է որ իրեն պէս խղճամիտ պրպտող մը իրապէս «հարուստ նիւթեր» հաւաքած ըլլայ կեանք մը եղող այդ շրջանին։

Այս գործին սկզբնօրինակ մը Սարմայեան հրատարակեց 1946ին, Փարիզ։ Ներկայ հատորը ցոյց կու տայ այն հսկայ յաւելում մը որ կրցեր է ընել մեղուաջան հեղինակը։ Անշուշտ ինչպէս ինքն իսկ կը խոստովանի իր ներածութեան մէջ (որ չեմ դիտեր ինչու խորհրդային «հայերէնի» վերածուեր է), նման դործ մը կարելի չէ կատարեալ ընել եւ ամբողջական։ Արդարեւ բազմաթիւ լաւ ծանօթ հատորներ չեն յիշուած հոն։ Վերջապէս կարելի չէ որ միակ հեղինակ մը, թէ՛ կուզ 25 տարի ուշխատելով կարենայ անթիւ անհամար օտարալեզու հատորներ պըրպտել, թղթատել՝ արձանագրելու համար ինչ որ հոն կայ Հայոց եւ Հայաստանի մասին։ Եւ ասկայն Արմենակ Սարմայեան մեծ յաջողութեամբ զլխաւոր հիմնաքարը դրաւ «Հայկական Մատենագիտութեան» աւելի ընդարձակ, աւելի ճոխ եւ բնական է բազմահատոր շարքին։ Առ այժմ մենք սրտանց երախտապարտ ենք այս համեստ եւ ազնիւ մշակին՝ իր հերոսական ճիգին համար։

«Հայկական Մատենագիտութեան» արագայ հրատարակութիւններ վստահօրէն պիտի ցուցակագրեն, օրինակ, ըսլոր Մարտո Բօլօնեբը՝ որ օտար լեզուով հրատարակուած են եւ որոնց մէջ Հայոց կամ Հայաստանի մասին կը յիշուի։

Աստեղի եւ աւելորդ պիտի ըլլար հոս ցանկել շատ մը անգլերէն գործեր որոնք չեն ներկայացուած այս հատորին մէջ։ Նման ցուցակ մը դրախօսականի մը մէջ օգտակար պիտի ըլլար որեւէ կերպով։ Ոչ ալ որեւէ կերպով պիտի կրնար նուագեցնել Սարմայեանի կատարած կոթողային գործին մեծ արժէքը։ Սարմայեան իր այս գործով զօրաւոր կերպով կը շեշտէ կարեւորութիւնը ընդարձակ եւ լիակատար «Հայկական Մատենագիտութեան» մը։

Շնորհակալ ենք Հայաստանի Ակադեմիային, Արարատ Դարբեանին՝ որ կըցան

զլուխ հանել այս դժուար ձեռնարկին տըրպազրութիւնը, որուն արդիւնքը անտարակոյս պիտի բեղմնաւորէ Հայաստանի ուսանողութեան կրթութիւնը եւ Հայ գիտնականներու ուսումնասիրութիւնները։

Կրկին եւ կրկին երախտապարտ ենք Արմենակ Սարմայեանին, որ ինքնանուէր եւ հերոսական ճիգով մը մեզի տուաւ «Հայկական Մատենագիտութիւն»ը։

Թ. ՔԻՆՍԵԱՆ

ՐԱՅՅԻՆ ՏԱՐԵԿՈՒՄ: Խմբագիր՝ Տաճատ Պօղոսեան: 1970, Բ Տարի, էջ 688:

Թէ՛ եւ մի փոքր ուշացումով, բայց եւ ի մեծ ուրախութիւն բոլորի, սրանից մի քանի ամիս առաջ լոյս տեսաւ Տաճատ Պօղոսեանի Րաֆֆի Տարեգիրքը։

Երկրորդ տարին է ինչ Թեհրանում ըսկընել է լոյս տեսնել այս տարեգիրքը, որն իր ծաւալով ու բովանդակութեամբ, զերպանցում է իր նախորդին։

Այս հատորն եւս ունի լաւ թուղթ, մասքուր տպագրութիւն, գեղեցիկ կազմ եւ բազմապիսի բովանդակութիւն, որոնք ներկայացնում են հետեւեալ բաժինները՝ Գրական (Սփիւռք եւ Հայաստան), Հին էջեր, Իրանեան Արդի Գրողներ, Պատմա-բանասիրական, Պատմա – տեղագրական, Յոբելեանական, Հայ Կեանքը 1969–70ին (Սփիւռքում եւ Հայաստանում), Արձագանգ Իրանահայ Կեանքի եւայլն։

Նիւթերն այնքան առատ են այդտեղ, որ եթէ պէտք լինի անդրադառնալ բովանդակութեան, ապա անհրաժեշտ է որոշ կարեւոր յօդուածներէ համար գրել առանձին դրախօսական. ուստի այս սեղմ տողերով ոչ մի կերպ հնարաւոր չէ սպառել ձեռով խօսել Տարեգիրքի մասին, այլ այն պէտք է միշտ ունենալ ձեռքի տակ եւ որպէս Հայ կեանքին ու դրականութեան վերաբերող մի անսպառ աղբիւր՝ օգտուել շարունակ։

Անհատական ճիգերով ու անձնական միջոցներով նման գրքեր հրատարակելը, եթէ չանենք նահատակութիւն, ապա կարելի է